ՔԱՂԱՔԱՑԻԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2019/12/01

ք. Երևան «24» դեկտեմբեր 2019թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Սերգեյ Մանուչարի Խալաթյանը, այսուհետ՝«Կատարող», մյուս կողմից, հետագայում համատեղ հիշատակվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն հանձնարարում է և վճարում, իսկ Կատարողը պարտավորվում է իրականացնել պայմանագրի 1.2 կետում նշված աշխատանքները, այսուհետ «Աշխատանք»:

1.2. Աշխատանքը բաղկացած է.

Ընկերության աշխատակիցների համար Պատվիրատուի կողմից կազմակերպված ամանորյա հավաքույթի ընթացքում երաժշտության՝ դիջեյ ծառայության ապահովում, Կատարողին պատկանող տեխնիկական միջոցներով:

1.3. Աշխատանքի կատարման ժամկետ է սահմանվում 2019թ. դեկտեմբերի 27-ը:

1.4. Աշխատանքը Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում հանձնման-ընդունման ակտով:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Աշխատանքի համար պայմանագրային գին է սահմանվում 69 000 (վաթսունինը հազար) ՀՀ դրամ:

2.2. Վճարումը կատարվում է փոխանցումով՝ փաստացի կատարված աշխատանքի հանձնման-ընդունման ակտի հիման վրա, դրանց ստորագրումից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:

3. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

4. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագրում կատարված ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք գրավոր են և ստորագրված Կողմերի կողմից:

Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	*Կատարող՝*
ք. Երևան, Նորք, Հոսնեկյան 95 *Ամերիաբանկ ՓԲԸ* *Հ/հ 1570027609970100* *ՀՎՀՀ 01501898* *Գլխավոր տնօրեն* *Մ. Միլիտոնյան*	*Խալաթյան Սերգեյ* *Անձնագիր* AT0263019 *տրված 08.08.2019թ., 009-ի կողմից* *Երևան, Սարի թաղ 7 փող. Նրբ. 14 տ.* *ՀԾՀ 2512926544* *Մ. Խալաթյան*

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«ՀՀՌՑ» ՓԲ ընկերության
աշխատակազմի ղեկավար
Ռ. Սահակյան

ԱԿՏ
Հանձնման-ընդունման

27.12.2019թ

Մենք, ներքոստորագրյալներս, «ՀՀՌՑ» ՓԲԸ ընդհանուր բաժնի պետ Ա. Խաչատրյանը, մի կողմից, և Կատարող Ս. Խալաթյանը, մյուս կողմից, կազմեցինք սույն ակտը հետևյալի մասին.
-համաձայն 24.12.2019թ. կնքված աշխատանքների կատարման թիվ 2019/12/01 քաղաքացիա-իրավական պայմանագրի, Կատարող Ս. Խալաթյանի կողմից ընկերության աշխատակիցների համար կազմակերպված ամանորյա հավաքույթի ընթացքում իրականացվել է երաժշտության՝ դիջեյ ծառայության ապահովում, իրեն պատկանող տեխնիկական միջոցներով:

Աշխատանքները կատարվել են համաձայն պայմանագրի դրույթների, որի համար ստորագրում ենք:

Ընդունող՝

Ա. Խաչատրյան

Հանձնող՝

Ս. Խալաթյան